# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0940-Ա

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը վարձակալության տրամադրելու մասին 29 հունիսի 2026 թվականի թիվ 19 արձանագրությունը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքում 29 հունիսի 2026 թվականին անցկացված վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված Վարուժան Վահրամի Թադևոսյանին 25 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել լոտ 19. 06-041-0267-0013 կադաստրային ծածկագրով 0,1585հա, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամաս՝ մրցույթում առաջարկված առավելագույն գնով՝ տարեկան 5250 ՀՀ դրամով:

2. Վարուժան Վահրամի Թադևոսյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Վարուժան Վահրամի Թադևոսյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

03 օգոստոսի 2026
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0941-Ա

### ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը վարձակալության տրամադրելու մասին 20 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2 արձանագրությունը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքում 20 հոկտեմբերի 2025 թվականին անցկացված վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված Գենրիետա Հենրիկի Ղումաշյանին 25 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել լոտ 2. 06-070-0397-0001 կադաստրային ծածկագրով 0,4409 հա, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 2-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս՝ մրցույթում առաջարկված առավելագույն գնով՝ տարեկան 10500 ՀՀ դրամով:

2. Գենրիետա Հենրիկի Ղումաշյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Գենրիետա Հենրիկի Ղումաշյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

03 օգոստոսի 2026
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0942-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-070-0289-0078 կադաստրային ծածկագրից 0,01658 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 8-րդ փողոց, 8/9 հողամաս փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

04 օգոստոսի 2026
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0943-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-023-0051-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 3-րդ փողոց, 51 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

04 օգոստոսի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0944-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. մայիսի 26-ի թիվ 550 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետով, հաշվի առնելով Փամբակ համայնքի ավագանու 08 հուլիսի 2026 թվականի N 109-Ա որոշումը, հիմք ընդունելով Սեյրան Սարգիսի Դերձյանի դիմումը. ***որոշում եմ***

1 . Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրում Սեյրան Սարգիսի Դերձյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0090-0016 կադաստրային ծածկագրով 0,161248 հա հողամասին կից գտնվող 06-070-0090-0017 կադաստրային ծածկագրով 0.07673 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարել Սեյրան Սարգիսի Դերձյանին:

2.Պարտավորեցնել Սեյրան Սարգիսի Դերձյանին համայնքի ֆոնդային բյուջե վճարել 607702 (վեց հարյուր յոթ հազար յոթ հարյուր երկու) ՀՀ դրամ՝ հողի օտարումից եկամուտներ 900235422137 հաշվեհամարին:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

04 օգոստոսի 2026
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0945-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-066-0014-0017 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Ձորագյուղ, 3-րդ փողոց, 2-րդ փակուղի, 11/1 հողամաս փոստային հասցե:

2. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-066-0013-0019 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Ձորագյուղ, 2-րդ փողոց, 1-ին փակուղի, 3 բնակելի տուն փոստային հասցե:

3.Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

04 օգոստոսի 2026
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0946-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-066-0004-0009 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Ձորագյուղ, 1-ին փողոց, 21 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

04 օգոստոսի 2026
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0947-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, Փամբակի համայնքի գլխավոր հատակագիծը՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի 9 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, հաշվի առնելով «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, հիմք ընդունելով Վանուշ Շիապազի Մելքումյանի դիմումը, սեփականության վկայականը՝ N 08062015-06-0006, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ***

1.Փամբակ համայնքի Բազում բնակավայրում Վանուշ Շիապազի Մելքումյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0236-0004 ծածկագրով 0,08568հա ճշտված սահմաններով գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի՝ կադաստրային քարտեզի և սեփականության իրավունքի վկայականը համապատասխանեցնելու նպատակով:

2.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության պահին կադաստրային արժեքի տարբերություն չի առաջանում, քանի որ հողամասը (վկայական՝ N 08062015-06-0006) պետական գրանցում է ստացել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0948-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-070-0024-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 1-ին փողոց, 63 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

04 օգոստոսի 2026
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0949-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԷՍՄԻՐԱ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի 9-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի և 2-րդ կետի բ. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Էսմիրա Վարդումյանի 2026 թվականի օգոստոսի 03-ի հայտը՝ ***որոշում եմ՝***

1.Անհատ ձեռնարկատեր Էսմիրա Վարդումյանի /ՀՎՀՀ 66820978/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի 13 փ. շենք 36 հասցեի շինությունում (34,3 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն՝ 2026 թվականի 3-րդ եռամսյակի (01.07.2026թ.-31.09.2026թ.) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

04 օգոստոսի 2026
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0950-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՀՄԱՅԱԿԻ ԱԲԱԶՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի ա. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արամայիս Աբազյանի 2026 թվականի օգոստոսի 03-ի հայտը՝
***որոշում եմ***

1.Անհատ ձեռնարկատեր Արամայիս Աբազյանի /ՀՎՀՀ 66876179/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի 11 փ, 1 տնակ հասցեում (24 քմ մակերեսով ոչ հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 3-րդ եռամսյակի (01.07.2026 թ.-31.09.2026 թ.) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

04 օգոստոսի 2026
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0951-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՈՒՍԻԿ ԱՎԱԳԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա. և բ. ենթակետերով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի և 2-րդ կետի բ. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լուսիկ Բաբայանի 2026 թվականի օգոստոսի 03-ի հայտը՝ ***որոշում եմ***

1.Անհատ ձեռնարկատեր Լուսիկ Բաբայանի /ՀՎՀՀ 66876059/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի 20 փողոց, 4 տուն հասցեում (28 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 3-րդ եռամսյակի (01.07.2026 թ.-31.09.2026 թ.) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

04 օգոստոսի 2026
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0952-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԻԼՅԱ ԳԵՐԱՍԻՄԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա. և բ. ենթակետերով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի և 2-րդ կետի բ. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լիլյա Մուսայելյանի 2026 թվականի օգոստոսի 03-ի հայտը՝ ***որոշում եմ***

1.Անհատ ձեռնարկատեր Լիլյա Մուսայելյանի /ՀՎՀՀ 66996882/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 2 փողոց, 37/1 հասցեում (37,23 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 3-րդ եռամսյակի (01.07.2026թ-31.09.2026թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

04 օգոստոսի 2026
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0953-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, հաշվի առնելով Սոնիչկա Արտուշի Վարդումյանի (ծնված՝ 15.04.1943թ.) դիմումը, «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2026HNZTZX մուտքագրման ծածկագրով տեղեկանքը Վահագնի գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 13.05.1991թ. թիվ որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ***

1. Հաստատել Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, 6-րդ փողոց, 5 բնակելի տուն հասցեում գտնվող 06-103-0022-0011 կադաստրային ծածկագրով 0,03444 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա շինության չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Սոնիչկա Արտուշի Վարդումյանի (ծնված՝ 15.04.1943թ.) սեփականության իրավունքը 06-103-0022-0011 կադաստրային ծածկագրով 0,03444 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա գտնվող՝ մինչև 2001թ-ը կառուցված ընդհանուր 97,3քմ չափերով բնակելի տան նկատմամբ:

3.Հողամասի վրա առկա է 2023թ-ին  ինքնակամ կառուցված 6.50քմ մակերեսով մառան:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական  գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

05 օգոստոսի 2026, գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0954-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 16012025-06-0024 վկայականը, սեփականատեր Սուսաննա Սուրենի Ալիխանյանի դիմումը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի տարանջատման հատակագիծը՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-070-0121-0005 կադաստրային ծածկագրով 0,49354 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը տարանջատել երկու գույքային միավորների՝ 0,44529 հա մակերեսով հողամասի, 0,04824 հա մակերեսով հողամասի՝ համաձայն «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից կազմված տարանջատման հատակագծի:

2. 06-070-0121-0005 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,44529 հա (առանձնացվող հատված 1)արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 2-րդ փողոց, 10-րդ փակուղի, 2 հողամաս փոստային հասցե:

3. 06-070-0121-0005 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,04824 հա (առանձնացվող հատված 2) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 2-րդ փողոց, 34 հողամաս փոստային հասցե:

4.Սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերով տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

05 օգոստոսի 2026, գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0955-Ա

### ԳԱՐԵԳԻՆ ՈՍԿԱՆԻ ՔՈՉԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Գարեգին Ոսկանի Քոչինյանի (ծնված՝ 18.11.1966թ.) դիմումը, հիմք ընդունելով «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման համաձայնությունը և 2026JSWCQ8 (31.03.2026թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետություն, Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, 1-ին փողոց, 5-րդ նրբանցք, 19 անասնաշենք հասցեում գտնվող 06-103-0148-0001 կադաստրային ծածկագրից 0,033181 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա կառուցված անասնաշենքի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Ճանաչել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի սեփականության իրավունքը Վահագնի, 1-ին փողոց, 5-րդ նրբանցք, 19 անասնաշենք հասցեում գտնվող 06-103-0148-0001 կադաստրային ծածկագրից 0,033181 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա 1986թ.ին ինքնակամ կառուցված 308.69 ք/մ ներքին մակերեսով անասնաշենքի նկատմամբ:

3.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, Գարեգին Ոսկանի Քոչինյան կողմից 06-103-0148-0001 կադաստրային ծածկագրից 0.035799 հա հողամասի վրա 1986թ.ին ինքնակամ կառուցված 308.69 ք/մ ներքին մակերեսով անասնաշենքը:

4. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 16 հունիսի 2026 թվականի N 0693-Ա որոշումը:

5.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ

05 օգոստոսի 2026
գ. Փամբակ